ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՆԱՏԱԼՅԱ ՍԻՆՈՐՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Սինորյան,

ի պատասխան Ձեր 08.01.2024թ. գրության՝ տեղեկացվում է, որ կատարված տեղատեսությամբ Կենտրոն վարչական շրջանի Սարյան փողոցի երկայնքով՝ ավտոճանապարհային երթևեկության կամ մայթային հատվածներում տարբեր իրերի տեղադրման դեպքեր չեն արձանագրվել:

Միաժամանակ տեղեկացվում է, որ քաղաքապետարանի աշխատակազմի հասարակական կարգի պահպանության ծառայության և Հայաստանի Հանրապետության ոստիկանության համապատասխան ստորաբաժանման հետ համատեղ պարբերաբար կազմակերպվում են միջոցառումներ՝ Երևան քաղաքի վարչական տարածքում, այդ թվում՝ նշված հատվածներում, ոչ սահմանված տեղերում տեղադրված տարբեր իրերի տեղափոխման համար: Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցները պարբերաբար իրականացնում են շրջայցեր Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի տարածքում, այդ թվում՝ Սարյան փողոցում և կայանմանը խոչընդոտող առարկաներ հայտնաբերելու դեպքում դրանք հեռացվում են տարածքներից:

Տեղեկացվում է նաև, որ հաշվի առնելով ներկայացված խնդիրը, կիրականացվեն լրացուցիչ ուսումնասիրություններ նշված տարածքներում և վարչական իրավախախտման հիմքերի առկայության դեպքում կձեռնարկվեն համապատասխան միջոցառումներ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ